



Արարատյան բակալավրիատ

Արարատյան բակալավրիատի  
ավագ դպրոցի  
Առարկայական վերջնարոյունքներ

Հայոց պատմություն  
հայագիտական առարկայախմբի խորացված  
ուսուցման համար

*Ծրագիրը նախատեսված է 2016- 2017 թթ. քննական շրջանի համար*

## Բովանդակություն

1. ԱԲ-ի «հայոց պատմություն» առարկայի նպատակները.....	3
2. Առարկայի բովանդակությունը .....	4
3. Առարկայի գնահատման սկզբունքները.....	12
Ընթացիկ գնահատում.....	12
Ամփոփիչ գնահատում .....	12

# 1. ԱԲ-ի «հայոց պատմություն» առարկայի նպատակները

ԱԲ ծրագրում «հայոց պատմության» դասընթացը նպատակ ունի զարգացնելու սովորողի պատմական մտածելակերպը և ձևավորելու պատմական պատասխանատվություն: Պատմական մտածելակերպի զարգացումն ապահովում է ուսումնական գործընթացի իմացական բաղադրիչը, իսկ պատմական պատասխանատվության ձևավորումը՝ զգայական բաղադրիչը:

**Պատմական մտածելակերպը** ԱԲ-ի պատմության դասավանդման համատեքստում հմտություն է, որի շնորհիվ սովորողը կարողանում է խմբավորել անցյալի մասին ձեռք բերված տեղեկությո՞՞ն՝ պատմական երևույթները՝ դրանց պատճառահետևանքային կապը նկարագրելու, համեմատելու, մեկնաբանելու, բացատրելու նպատակով: Սովորողը տալիս է պատմական հարցեր, դիտարկում է պատմական երևույթները համատեքստում, օգտագործում է փաստեր՝ թեմաների հիմքային հասկացությունների և տերմինների ընկալման համար: Դասընթացի արդյունքում աշակերտը կարողանում է արտահայտել իր տեսակետը և պաշտպանել այն՝ բերելով փաստարկներ, որոնք հիմնված են անցյալի մասին տեղեկությո՞՞ն հաղորդող աղբյուրների վրա:

**Պատմական պատասխանատվությունն** ակտիվ հիշողության բաղադրիչի ձևավորումն է: ԱԲ-ը, պատմության դասավանդման համատեքստում, պատմական պատասխանատվությունը սահմանում է որպես պատմական հարցերի ուսումնասիրման էթիկական սկզբունքների և պատմական ժառանգության կրողի հատկանիշ: Սովորողն ուսումնասիրում է մարդկանց և իրադարձությունները, պատմական վայրերն ու նյութական ժառանգությունը որպես պատմական ժառանգություն:

Սովորողը դիտարկում է հայոց պատմությունը քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային տեսանկյուններից և զուգահեռ անդրադառնում է համաշխարհային պատմության համատեքստին:

## 2. Առարկայի բովանդակությունը

### ԹԵՄԱ 1: ԶԱՐԻՑ ԴԵՊՈՒ ՄԱԳԱՐԱԹ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՇՐՋԱՆ

Թեման կենտրոնանում է հայոց պատմության ուսումնասիրության գիտական սկզբունքների և մոտեցումների, ինչպես նաև հայոց հին քաղաքական, մշակութային պատմության վրա, Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի ձևավորման, լեռնաշխարհի աշխարհագրական պայմանների, ինչպես նաև հայոց լեզվի պատմության տարբեր խնդիրների վրա: Թեման ներառում է նաև հայոց հնագիտական և մարդաբանական պատմությունը: Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն ընդունումը համարվում է հայոց պատմության Միջին դարերի սկիզբը:

Ենթաթեմա	Վերջնարդյունք
<p>1. Հայոց պատմության պարբերացումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել պատմական վճռական իրադարձությունները, որոնք պայմանավորում են հայոց պատմության պարբերացման փուլերը</li> <li>- գուգահեռներ տանել հայոց և համաշխարհային պատմական պարբերացումների միջև</li> </ul>
<p>2. Հայկական լեռնաշխարհը՝ հայ ժողովրդի ձևավորման միջավայր</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայկական լեռնաշխարհի հիմնական բնական պայմանները</li> <li>- բացատրել, թե ինչպես կարող են Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական, բնական պայմանները ազդել հայ ժողովրդի ձևավորման ընթացքի վրա</li> </ul>
<p>3. Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ</p> <p>որպես մեծ առանձին</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել հնդեվրոպական ցեղերի ծագման մասին տարբեր տեսակետները գիտության մեջ</li> <li>- գնահատել հայոց լեզվի նշանակությունը հայ ժողովրդի ձևավորման և պատմական զարգացման ընթացքում</li> </ul>
<p>4. Քարից դեպի մետաղներ</p> <p>Հայկական լեռնաշխարհը Քարի և Բրոնզի դարերում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել, թե ինչու են դարաշրջաններն անվանվում որևէ նյութի անվամբ</li> <li>- նկարագրել Հայկական լեռնաշխարհում գտնված հնագույն վկայությունները Քարի և Բրոնզի դարերի մասին</li> <li>- դասակարգել Քարի դարի գործիքները և զենքերը</li> <li>- բացատրել, թե որոնք էին քարից դեպի մետաղ փոփոխությունների հիմնական ազդակները</li> </ul>
<p>5. Հայոց ծագումնաբանության հարցը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- տարբերել ավանդազրույցներն ու առասպելները պատմական ստույգ իրողությունից</li> <li>- գտնել պատմական իրական փաստեր ավանդազրույցներում և առասպելներում</li> <li>- ներկայացնել հայ ժողովրդի ավանդազրույցներն ու առասպելները</li> <li>- դասակարգել հայ ժողովրդի ծագման և ձևավորման հիմնական գործոնները</li> </ul>
<p>6. Արատտայից Ուրարտու</p> <p>Հայկական պետական կազմավորումները մ.թ.ա.3-րդից 1-ին հազարամյակներում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայկական լեռնաշխարհում հնագույն պետական կազմավորումների մասին վկայող հիմնական աղբյուրները</li> <li>- համեմատել և ներկայացնել հնագույն և ժամանակակից պետությունների միջև հիմնական տարբերությունները</li> </ul>

<p><b>7. Բրոնզից դեպի երկաթ. Ուրարտու՝ Խալդիի երկիրը</b></p> <p>Ուրարտուն (Վանի թագավորությունը) և Ասորեստանը</p> <p>Աշխարհի երկու գերտերությունները մ.թ.ա.9-6-րդ դդ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Ուրարտուի թագավորության ծագման վերաբերյալ գիտական հիմնական մոտեցումները</li> <li>- գնահատել Ուրարտուի թագավորության դերը՝ որպես հայ ժողովրդի ձևավորման ընթացքի ազդակ</li> </ul>
<p><b>8. Հին ու նոր պետություններ</b></p> <p>Ուրարտուի անկումը, մ.թ. ա.6-րդ դար</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Ուրարտուի անկման ներքին և արտաքին հիմնական գործոնները</li> <li>- բացատրել Ուրարտուից Երվանդունյաց Հայաստան փոխակերպման ընթացքը</li> </ul>
<p><b>9. Ինչու Խալդին դարձավ Արամազդ</b></p> <p>Հայաստանը Երվանդունիների արքայատոհմի օրոք, մ.թ.ա.6-3-րդ դդ.</p> <p>Հայաստանը՝ Աքեմենյան Պարսկաստանի սատրապություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Ուրարտուի և Երվանդունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգերի տարբերությունները</li> <li>- մեկնաբանել, թե ինչու է Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ Հայաստանը տարբեր անուններով ներկայացված</li> <li>- գնահատել Հայաստանի աշխարհաքաղաքական նշանակությունը Աքեմենյան Պարսկաստանի գերակայության շրջանում</li> </ul>
<p><b>10.</b> Հայաստանը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և դրանց հաջորդած շրջանում, մ.թ.ա.331-201 թթ.</p> <p>Հայաստանը Արևելքի և Արևմուտքի միջև հելլենիստական դարաշրջանում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել 331 թ. Գավգամելայի ճակատամարտի նշանակությունը Հայաստանի անկախության վերականգնման մեջ</li> <li>- Ներկայացնել հելլենիզմը՝ որպես ժամանակի համաշխարհայնացման գործընթաց</li> <li>- գնահատել հելլենիզմը Հայաստանում որպես արևելյան և արևմտյան մշակութային միահյուսում</li> </ul>
<p><b>11. Մեծ բարեփոխումներ. սահմանաքարերից մինչև գերտերություն</b></p> <p>Հայաստանը Արտաշեսյանների արքայատոհմի օրոք, մ.թ.ա.189-1</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Զ. ա. 190 թ. Մազնեսիայի ճակատամարտի նշանակությունը Հայաստանը թագավորություն հռչակելու գործում</li> <li>- Ներկայացնել, թե ինչ է բարեփոխումը</li> <li>- գնահատել Արտաշես Ա-ի բարեփոխումների նշանակությունը հայկական պետության ամրապնդման մեջ</li> </ul>
<p><b>12. Հայաստանը և Հռոմը. միապետություն, հանրապետություն</b></p> <p>Պատմական հայտնի դեմքերը միևնույն ժամանակներում, մ.թ.ա.1-ին դար (Տիգրան Բ Մեծ, Արտավազդ Բ, Հուլիոս Կեսար, Գնեոս Պոմպեոս, Մարկոս Անտոնիոս և այլն). պատմական զուգահեռներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Մերձավոր Արևելքում և Միջերկրական ծովում տիրող աշխարհաքաղաքական իրավիճակը</li> <li>- համեմատել հայկական և օտար աղբյուրները Արտաշեսյանների մասին</li> <li>- համեմատել Հռոմի և Հայաստանի քաղաքական համակարգերը</li> </ul>
<p><b>13. Անկում մեծ վերելքից հետո</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել քաղաքական համակարգի փոփոխությունը, երբ Հռոմը հանրապետությունից դարձավ կայսրություն</li> </ul>

<p>Արտաշեսյան արքայատոհմի անկումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Արտաշեսյան արքայատոհմի անկման հիմնական գործոնները</li> </ul>
<p><b>14. «Արաքսը կամուրջներ չի հանդուրժում».</b> Հայաստանը դրածոների ժամանակաշրջանում (մ.թ. 1-66 թթ.)</p> <p>Նոր արքաներ՝ Արշակունիների արքայատոհմը (66-428 թթ.) Հայաստանում</p> <p>Առաջին Արշակունիների և առաջին առաքյալների ժամանակները</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել, թե ինչու հայերը չէին հանդուրժում օտար դրածոներին Հայաստանի գահին</li> <li>- մեկնաբանել, թե ինչու Ներոնը մեծ շուքով Հռոմում ընդունեց, թագադրեց և ճանապարհեց Տրդատ Ա-ին</li> <li>- նկարագրել Քրիստոսի առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի գալուստը և գործունեությունը Հայաստանում</li> <li>- գնահատել Հայաստանի դերը Արևելքի և Արևմուտքի միջև աշխարհաքաղաքական և համաշխարհայնացման գործընթացներում</li> </ul>
<p><b>15. Քրիստոնեության ընդունումը Հայաստանում որպես պետական կրոն 301 թ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայաստանում քրիստոնեության տարածման ընթացքը Զ. հ. 1-4-րդ դդ.</li> <li>- մեկնաբանել, թե ինչ կարող էին նշանակել պետական կրոնի և դրա ընդունման հասկացությունները 4-րդ դարում</li> <li>- մեկնաբանել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու տարբեր շարժառիթները</li> <li>- համեմատել Հայաստանում և Հռոմեական կայսրությունում քրիստոնեության տարածման ընթացքները</li> </ul>
<p><b>16. Սահմանաքարերից դեպի ավատատիրություն</b></p> <p>Ավատատիրական համակարգի ծնավորումն ու զարգացումը Հայաստանում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել ավատատիրական համակարգը մասնավոր սեփականության տեսանկյունից</li> <li>- բացատրել քրիստոնեական իրականության կապը ավատատիրության հետ</li> <li>- համեմատել և ներկայացնել մինչքրիստոնեական և հետքրիստոնեական Հայաստանի կառավարման համակարգերը</li> </ul>
<p><b>17. Աշխարհի՞կ, թե հոգևոր իշխանություն</b> 4-րդ դ., Արշակունի արքաների հարաբերությունները քրիստոնեական հոգևոր դասի հետ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել արքաներ Տիրանի, Արշակ Բ-ի, Պապի՝ կաթողիկոսների հետ հակասական հարաբերությունների հիմնական պատճառները</li> <li>- համեմատել և գնահատել Հայաստանում և Հռոմեական կայսրությունում հեթանոսությունից քրիստոնեություն անցման հիմնական ընթացքը</li> </ul>

**ԹԵՄԱ 2: ՁԵՆԱԳՐԻՑ ԴԵՊԻ ՏՊԱԳԻՐ ԳԻՔ. ՄԱԳԱՂԱԹԻՑ ԴԵՊԻ ԹՈՒՂԹ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՍԿԵՂԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՏԱՌ ԱՌԱՋԻՆ ԳՐԶԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ**

Այս բաժնի ուսումնասիրության գլխավոր առարկան հայոց միջնադարյան պատմությունն է, Մերձավոր Արևելքում ժողովրդագրական գործընթացները և դրանց ազդեցությունը Հայկական լեռնաշխարհի վրա, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական փոփոխությունները Մեծ Հայքի ներսում: Արաբական, սելջուկ-թուրքական և մոնղոլական արշավանքների ազդեցությունը Հայաստանի վրա և հայերի զանգվածային արտագաղթը Հայկական լեռնաշխարհից և հայկական գաղթօջախների հիմնումը, ինչպես և Կիլիկիայի հայկական պետության պատմությունը:

**Ենթաթեմա Կերչնարդյունք**

<p><b>1. Ոսկե տառերով Ոսկեդար</b></p> <p>Հայկական այբուբենի գյուտը և հայոց պատմության մշակութային Ոսկեդարը, 5-9-րդ դդ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայաստանում հայկական այբուբենի տարածման ընթացքը</li> <li>- ներկայացնել Հայաստանի պետության շարժառիթները հայկական այբուբենի գյուտի նախաձեռնման և Հայաստանում տարածման համար</li> <li>- գնահատել հայկական այբուբենի նշանակությունը հայոց լեզվի, մշակույթի և ինքնության պահպանության մեջ</li> </ul>
<p><b>2. Անթագ պետականության ժամանակները (5-9-րդ դդ.)</b></p> <p>Բաժանում երկու մասի. մի կողմից՝ Հռոմի, ապա՝ Բյուզանդական կայսրության, մյուս կողմից՝ Պարսկաստանի միջև</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայաստանի բաժանման հիմնական պատճառները</li> <li>- համեմատել և գնահատել Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը Հռոմի և Բյուզանդիայի տիրապետության տակ</li> </ul>
<p><b>3. Հայկական «Ռեկոնքիստան»</b></p> <p>Հայաստանը արաբական արշավանքների շրջանում, 7-9-րդ դդ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- բացատրել, թե ինչու Արաբական խալիֆայությունը պայմանագիր կնքեց հայոց տանուտեր Թեոդորոս Ռշտունու հետ</li> <li>- վերլուծել և գնահատել Հայաստանի դերը Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության աշխարհաքաղաքական ծրագրերում</li> </ul>
<p><b>4. Անկախ թագավորության Նոր դարաշրջան</b></p> <p>Բագրատունիների արքայատոհմը 9-11-րդ դդ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում Բագրատունյաց Հայաստանի թագավորություն հռչակվելու նախօրեին</li> <li>- ներկայացնել Բագրատունյաց Հայաստանի թագավորության հաստատման հիմնական նախադրյալները</li> <li>- գնահատել Անի մայրաքաղաքի դերը Բագրատունյաց Հայաստանի զարգացման համար</li> </ul>
<p><b>5. Լեռներից դեպի ծով</b></p> <p>Հայերը և Միջերկրական ծովը. Կիլիկիայի հայկական պետությունը 11-14-րդ դդ.</p> <p>Կիլիկյան Հայաստանը Եվրոպայի և Ասիայի՝ խաչակիրների և մահմեդականների միջև</p>	<ul style="list-style-type: none"> <li>- նկարագրել Կիլիկիայի բնական պայմանները</li> <li>- գնահատել Կիլիկիայի աշխարհագրական պայմանները քաղաքակրթական զարգացում ունենալու տեսանկյունից</li> <li>- բացատրել, թե ինչու էին հայերը զանգվածային կերպով բնակվում Կիլիկիայի տարածքում</li> <li>- ներկայացնել հայկական հիմնական իշխանությունները Կիլիկիայում</li> <li>- ներկայացնել Կիլիկյան Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը</li> <li>- գնահատել Կիլիկիայի հայկական պետության նշանակությունը հայոց պատմության մեջ</li> </ul>

<p><b>6. Կիլիկյան Հայաստանը 13-14-րդ դդ.. մոնղոլների և մամլուքների միջև</b></p> <p>Կիլիկյան Հայաստանի անկումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև դաշինքի ընթացքը</li> <li>- Ներկայացնել աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում Կիլիկիայի հայկական պետության անկման Նախաշեմին</li> <li>- բացատրել և գնահատել պետությունների (Կիլիկյան Հայաստանի օրինակով) անկման ներքին և արտաքին գործոնները</li> </ul>
<p><b>7. Արծաթե դար՝</b> հայկական մշակութային երկրորդ վերելքը 10-14-րդ դդ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել և մեկնաբանել «մշակութային վերելք» հասկացությունը</li> <li>- բացատրել 10-14-րդ դդ. հայկական մշակութային վերելքի ներքին և արտաքին հիմնական ազդակները</li> <li>- գնահատել Արծաթե դարի Նշանակությունն ու կշիռը հայկական և համամարդկային մշակութային ժառանգության մեջ</li> </ul>
<p><b>8. Մութ դարեր.</b> Հայաստանը Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել հայկական վերջին պետությունների անկումից հետո ձևավորված իրադրությունը</li> <li>- Ներկայացնել և բացատրել հայ իրականության մեջ մշակութային անկման արտաքին և ներքին հիմնական գործոնները</li> <li>- գնահատել «Մութ դարերի» ազդեցությունը հայկական մշակութային զարգացման ընթացքի վրա</li> </ul>
<p><b>9. Մեծ փոփոխությունների սկիզբը</b></p> <p>Ձեռագրից դեպի տպագիր. 1512 թ. Վենետիկում հայերեն առաջին տպարանի հիմնումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- բացատրել, թե ինչու Եր հայկական մշակութային զարկերակը Հայկական լեռնաշխարհից տեղափոխվել գաղթօջախներ</li> <li>- գնահատել հայատառ հրատարակչության դերը հայկական մշակութային զարգացման ընթացքում</li> </ul>
<p><b>10. Տպագիր գրքից մինչև ազգային-ազատագրական շարժումներ (16-18-րդ դդ.)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել ազատագրական շարժումների ընթացքը</li> <li>- բացատրել ազատագրական շարժումների ներքին և արտաքին հիմնական ազդակները</li> <li>- գնահատել ազատագրական շարժումների դերը հայկական Նոր պետականության հաստատումը հասունացնելու ընթացքում</li> </ul>
<p><b>11. Միջերկրական ծովից Հնդկական օվկիանոս</b></p> <p>Հայերը Հնդկաստանում</p> <p>Առաջին հանրապետական սահմանադրությունը</p> <p>«Ռրոգայթ փառաց» սահմանադրությունը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Ներկայացնել Հնդկաստանում հայերի հանգրվանելու պատմական հանգամանքները</li> <li>- բացատրել թե ինչու հենց հնդկահայերն ի դեմս Մադրասի խմբակի գրեցին սահմանադրություն դեռևս գոյություն չունեցող Հայաստանի անկախ հանրապետության համար</li> <li>- համեմատել և գնահատել հնդկահայ սահմանադրության համամարդկային արժեքը</li> </ul>



**ԹԵՄԱ 3: ԱԶԳԱՅԻՆ ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ. ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ**

Այս բաժնի ուսումնասիրության գլխավոր խնդիրներն են հայոց պատմության նոր շրջանին ընդառաջ աշխուժացող ազգային-ազատագրական շարժումներին նպաստող գործոնները, հայկական լեռնաշխարհից և Կիլիկիայից հայերի մեծաթիվ արտագաղթի պատճառներն ու հետևանքները: Աշխարհաքաղաքական փոփոխությունները 16-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբ ընկած ժամանակաշրջանում և դրանց ազդեցությունը հայ իրականության վրա: Գաղթօջախներում հայկական հաստատութենական համայնքների ձևավորումն ու ընթացքը: Հայ քաղաքական մտքի զարգացման տրամանաբանական, շղթայական զարգացումը: Ցեղասպանության նախնական փուլը 19-րդ դարի վերջին, պատճառներն ու հետևանքները: Հայոց ցեղասպանության բուն փուլի իրագործումը, պատճառներն ու հետևանքները: Հայոց ցեղասպանության դատապարտման իրավական ընթացքը միջազգային իրավունքի տեսանկյունից:

**ԵՆթաթեմա Կերչնարդյունք**

<p><b>1. Անկախության համար պայքար Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի դեմ 16-18-րդ դդ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- զուգահեռներ տանել Հայաստանում և Եվրոպայում ընթացող քաղաքական, հասարակական փոփոխությունների միջև, ներկայացնել հիմնական միտումները</li> <li>- գնահատել Դավիթ Բեկի գործունեության դերը հայ ազգային ազատագրական շարժման մեջ</li> </ul>
<p><b>2. Պատերազմներ և պայմանագրեր. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները 19-րդ դարում</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ընթացքը</li> <li>- ներկայացնել և բացատրել պատերազմների հասունացման աշխարհաքաղաքական հիմնական նախադրյալները</li> <li>- ներկայացնել պատերազմներում հայերի մասնակցությունը</li> <li>- գնահատել ռուս-պարսկական և ռուս-թուրքական հաշտության պայմանագրերի ազդեցությունը հայ իրականության քաղաքական, սոցիալ-հասարակական կյանքի վրա</li> </ul>
<p><b>3. Նոր իրականություն. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսական կայսրությանը</b></p> <p>Գրաբարից աշխարհաբար. Հայաստանը հաջատուր Աբովյանի ժամանակներում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Ռուսական կայսրությանը Արևելյան Հայաստանի միանալու ընթացքը, գնահատել արդյունքներն ու հետևանքները</li> <li>- ներկայացնել մշակութային իրադրությունը Հայաստանում 19-րդ դ. առաջին կեսին</li> <li>- գնահատել գրականության՝ աշխարհաբարի անցման քաղաքակրթական նշանակությունը հայկական մշակութային, քաղաքական հետագա զարգացումներում</li> </ul>
<p><b>4. Քաղաքական իրադրություն. Նոր հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլ</b></p> <p>Քաղաքական կուսակցությունների ձևավորումը հայ իրականության մեջ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել քաղաքական կուսակցությունների հիմնման պատմական հանգամանքները</li> <li>- ներկայացնել և բացատրել քաղաքական կուսակցությունների գաղափարական ուղղվածության պատճառները</li> <li>- գնահատել կուսակցությունների դերը ազգային ազատագրական շարժման ընթացքում</li> </ul>
<p><b>5. Արյունոտ սուլթանը՝ Աբդուլ Համիդ II. հայերի զանգվածային կոտորածների առաջին փուլը Օսմանյան կայսրությունում</b></p> <p>Հայկական հարցի միջազգայնացումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Արևելքի և Արևմուտքի աշխարհաքաղաքական իրադրությունը Համիդյան կոտորածների նախօրեին</li> <li>- վերհանել և փաստարկել Սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից հայերին զանգվածաբար ոչնչացնելու ընթացքը որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականություն</li> <li>- գնահատել հայ քաղաքական վերնախավի դիրքորոշումը Համիդյան կոտորածների հանդեպ</li> <li>- ներկայացնել Հայկական հարցի միջազգայնացման պատմական ընթացքը և զարգացումները</li> </ul>

<p>6. <b>Մեծ պատերազմը.</b> հայերը և Առաջին աշխարհամարտը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- նկարագրել միջազգային հարաբերություններն աշխարհում Առաջին աշխարհամարտի նախօրեին</li> <li>- ներկայացնել հայ քաղաքական վերնախավի դիրքորոշումը և գործողությունները Առաջին աշխարհամարտի նախօրեին</li> <li>- գնահատել հայերի մասնակցությունը Առաջին աշխարհամարտին</li> </ul>
<p>7. <b>Հայոց ցեղասպանությունը 1915-1923 թթ.</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- վերլուծել Հայոց ցեղասպանությանը նախորդած հանգամանքները, որոնք նախանշում և բացահայտում էին Օսմանյան կառավարության նպատակները</li> <li>- դիտարկել «ցեղասպանություն» հասկացությունը միջազգային իրավունքի տեսանկյունից</li> <li>- բացատրել Հայոց ցեղասպանության արտաքին և ներքին պատճառները</li> <li>- գնահատել Հայոց ցեղասպանության հետևանքները հայոց պատմության հետագա ընթացքի համար</li> </ul>

**ԹԵՄԱ 4: ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ, 1918 Թ.-ԻՑ 21-ՐԴ ԴԱՐ**

Այս բաժնի ուսումնասիրության գլխավոր խնդիրներն են Հայաստանի նորագույն ժամանակաշրջանի ազդարարումն ի դեմս Հայաստանի 1918 թ. հանրապետության, վերջինիս հիմնադրման և անկման ներքին ու արտաքին գործոնները: Հայաստանի խորհրդայնացումը. ընթացքը, պատճառներն ու հետևանքները: Բռնաճնշումների ալիքը և հետևանքները Հայաստանում: Սոցիալ-հասարակական իրողություններն ու դրվածքը Հայաստանում ԽՍՀՄ ժամանակաշրջանում. ՀԽՍՀ տնտեսության ձևը, կացությունը ԽՍՀՄ տնտեսության և համաշխարհային սոցիալ-տնտեսական զարգացումների համատեքստում: ԽՍՀՄ կազմից զատվելու և ինքնորոշման ու անկախության համար պայքարող գաղտնի կազմակերպությունների գործունեությունը: Հայաստանի ինքնորոշման և անկախության հռչակման գործընթացը ներքին հասարակական խմորումների և արտաքին՝ ԽՍՀՄ փլուզման, համաշխարհային զարգացումների համատեքստում: Արցախյան շարժումը, փուլերը:

Ենթաթեմա	Վերջնարդյունք
<p>1. <b>Մեծ ծնունդ. հայոց պետականության վերականգնումը.</b> Հայաստանի առաջին հանրապետությունը 1918-1920 թթ.</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման պատմական ընթացքը</li> <li>- զուգորդել և բացատրել աշխարհում նոր պետությունների առաջացման և առաջին հանրապետության հիմնադրման ընդհանուր միտումներն ու զարգացումները</li> <li>- ներկայացնել առաջին հանրապետության անկման ներքին և արտաքին հիմնական գործոնները</li> <li>- գնահատել առաջին հանրապետության դերը հայկական պետականության զարգացման մեջ</li> </ul>
<p>2. <b>Կարմիր տենդ.</b> խորհրդային կարգերի հաստատումը և Հայաստանի խորհրդայնացումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Ռուսաստանում փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների պատմական ընթացքը և դրանց արտահայտությունը Հայաստանում</li> <li>- բացատրել Հայաստանի խորհրդայնացման ներքին և արտաքին ազդակներն ու պատճառները</li> <li>- գնահատել Հայաստանի խորհրդայնացման հետևանքներն ու արդյունքները</li> </ul>
<p>3. <b>Մեծ բռնաճնշումներն ու Անհատի պաշտամունքը</b>  Հայերը և Համաշխարհային երկրորդ պատերազմը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել խորհրդային Հայաստանում քաղաքական ու հասարակական կյանքը 1920-40-ական թթ.</li> <li>- բացատրել «Անհատի պաշտամունք» հասկացությունը</li> <li>- բացատրել բռնաճնշումների պատճառները և ներկայացնել դրանց հետևանքները Հայաստանում քաղաքական ու հասարակական մտքի ձևավորման վրա</li> <li>- ներկայացնել ԽՍՀՄ-ում և ամբողջ աշխարհում հայերի մասնակցությունը Համաշխարհային երկրորդ պատերազմին</li> </ul>

<p><b>4. Ձևալի ժամանակաշրջանը Ստալինի մահից հետո.</b> սփյուռքից դեպի հայրենիք. հայրենադարձության փուլերը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել ԽՍՀՄ-ում տեղի ունեցած հասարակական փոփոխությունները Ստալինի մահից հետո և դրա անդրադարձները Հայաստանում</li> <li>- ներկայացնել հայերի՝ սփյուռքից կազմակերպվող հայրենադարձության փուլերը, հետևանքներն ու արդյունքները</li> </ul>
<p><b>5. Տնտեսական էքստենսիվ զարգացում.</b> գիտությունը և մշակույթը, առօրեական կյանքը խորհրդային Հայաստանում</p> <p>Մասնավորից դեպի կոլեկտիվացում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել մասնավոր սեփականության բռնի ոչնչացումը և կոլեկտիվ տնտեսությունների հիմնումը Հայաստանում</li> <li>- ներկայացնել և գնահատել մասնավոր սեփականության ոչնչացման հետևանքները տնտեսական և հասարակական հարաբերություններում</li> <li>- գնահատել ԽՍՀՄ-ում միակուսակցական քաղաքական համակարգի հետևանքները Հայաստանում</li> </ul>
<p><b>6. Երկար սպասված ազատություն. Հայաստանը ինքնորոշման շրջափուլում</b></p> <p>Մեծ անկումներ և մեծ վերելքներ. ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախության հռչակումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- վերլուծել աշխարհում տիրող աշխարհաքաղաքական իրադրությունը, Սառը պատերազմի վերջին փուլը ԽՍՀՄ փլուզման նախաշեմին</li> <li>- ներկայացնել և գնահատել խորհրդային տարիներին ազգային ազատագրական շարժման գաղափարախոսության ընթացքը</li> <li>- ներկայացնել Հայաստանի ինքնորոշման և միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ վերստին դառնալու ներքին և արտաքին ազդակները</li> <li>- գնահատել անկախության և ինքնորոշման հանրաքվեի նշանակությունը հայկական պետականության շարունակականության համար</li> </ul>
<p><b>7. Վճռական ընտրություն և անազատության միջև.</b></p> <p>Արցախյան ազատագրական շարժումը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Արցախյան շարժման ընթացքը, կարգավորման ձևերը և փուլերը</li> <li>- բացատրել «ինքնորոշում» հասկացությունը միջազգային իրավունքի տեսանկյունից</li> <li>- գնահատել Արցախյան շարժման նշանակությունը Հայաստանի ժամանակակից պատմության ընթացքում</li> </ul>
<p><b>8. Բնական և ոչ բնական աղետներ.</b></p> <p>1988 թ. Սպիտակի երկրաշարժը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Սպիտակի երկրաշարժի պատմական ընթացքը</li> <li>- գնահատել երկրաշարժի հետևանքները Հայաստանի վերջին 25 տարվա պատմական զարգացումների վրա</li> </ul>
<p><b>9. Նոր ապագայի կառուցումը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- ներկայացնել Հայաստանում քաղաքական-հասարակական փոփոխությունները և զարգացումները ԽՍՀՄ փլուզումից հետո</li> <li>- գնահատել քաղաքական միակուսակցական համակարգից բազմակուսակցականի անցման հետևանքներն ու արդյունքները</li> <li>- ներկայացնել և գնահատել սոցիալ-տնտեսական նոր իրադրությունը Հայաստանում, նոր զարգացումները և միտումները</li> </ul>

### 3. Առարկայի գնահատման սկզբունքները

ԱԲ-ի հայոց պատմության ընթացիկ և ամփոփիչ քննությունները պետք է ստուգեն սովորողի կարողությունները երկու հիմնական ուղղությամբ:

#### Ա. Գիտելիք և ըմբռնում

Աշակերտները պետք է ցուցաբերեն գիտելիքներ և ըմբռնում հետևյալ ասպարեզներում.

- վերհիշել, ընտրել և նպատակային օգտագործել պատմական տեղեկույթը.
- բացատրության, վերլուծության և փաստարկված եզրահանգման միջոցով ցուցադրել այնպիսի հիմքային հասկացությունների տիրապետում, ինչպիսին են պատճառահետևանքային կապը, շարունակականությունը, փոփոխությունները և նշանակալիությունը՝ կախված պատմական համատեքստից:

#### Բ. Վերլուծություն, գնահատում և կիրառություն

Աշակերտները պետք է կարողանան՝

- իրականացնել պատմական ուսումնասիրություն, որպես ուսումնասիրության մաս վերլուծել և գնահատել մի շարք սկզբնաղբյուրներ և պատմական նյութեր.
- ելնելով պատմական համատեքստից՝ վերլուծել և գնահատել, թե ինչու են անցյալում կատարված գործընթացները տարբեր կերպ մեկնաբանվել ու ներկայացվել:

### Ընթացիկ գնահատում

Աշակերտներն ընթացիկ գնահատվում են մասնակցության, տնային աշխատանքի և ընթացիկ քննական աշխատանքների համար:

Մասնակցության գնահատականը հիմնվում է աշակերտների ներգրավվածության և ներդրման վրա: Տնային աշխատանքերը և մասնակցությունը գնահատվում են ըստ ձևավորող գնահատման սկզբունքի:

Աշակերտները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հանձնում են 5 միջանկյալ քննական աշխատանք: Յուրաքանչյուր աշխատանք նախատեսված է 90-110 րոպեի համար և կազմված է ծանոթ և անծանոթ սկզբնաղբյուրների հետ աշխատանքից, թեմայի ազատ շարադրանքից, համեմատական վերլուծությունից:

Ընթացիկ գնահատման բաղադրիչների հարաբերակցությունը հետևյալն է՝ մասնակցություն՝ 20%, տնային աշխատանք՝ 20% և քննական աշխատանք՝ 60%:

### Ամփոփիչ գնահատում

Գնահատման վերոնշյալ սկզբունքները նշված չեն առարկայի բովանդակության մեջ որպես որոշակի թեմային հատուկ վերջնարդյունքներ: Նշված հմտությունները քննության ընթացքում ստուգվելու են անծանոթ տեքստերի և նյութերի հիման վրա:

Ստորև ներկայացված աղյուսակն ընդհանրական պատկերացում է տալիս գնահատման սկզբունքների և քննական բաղադրիչների հարաբերակցության մասին:

Գնահատման սկզբունքը	Կշիռը (%)
Ա. Գիտելիք և ըմբռնում	60
Բ. Վերլուծություն, գնահատում և կիրառություն	40

Դասավանդման պլանավորում կատարելիս ուսուցիչները պետք է հաշվի առնեն, որ քննական ընդհանուր միավորի մեջ մեծ կշիռ (40%) պիտի ունենան հմտությունները, ներառյալ տեղեկույթի հետ աշխատանքը, վերլուծությունն ու գնահատումը: Ուսուցիչները դասապլանները մշակելիս և ընթացիկ ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնեն այս հարաբերակցությունը: